Լէքան)։ Քութայիսում հիւանդները զուրկ մնացին բժշկական օգնութիւնից։ Թախանձագին խնդրանքից յետոյ՝ մի քանիսը զետեղուեցին բանտի հիւանդանոցում բծաւոր տիֆով հիւանդների և այլ ոճրագործների կողքին, որոնցից ամէն օր մի քանի հոգի մեռնում էր խնամքի բացակայութեան պատճառով։ Բանտի հիւանդանոց տեղաւորուած հայերից մեռան մօտ 10 հոգի, որոնց անունները յայտնի է Քութայիսի հայ քահանային։ Բոլոր այդ օրերի ընթացքին՝ մեզնից իւրաքանչիւրը չէր դադարում կախում ունենալ այս կամ այն պաշտօնեայի կամ զինուորի քմահաճոյքից ու կամայականութիւնից։ Մեզ տանում էին՝ ատրճանակների փողը մեզ վրա ուղղած, մեզնից շատերին ենթարկում էին պահակապետերի և զինուորների ծեծին։ Շատերին կողոպտեցին, խլեցին դրամները. շատերի վրայից հանեցին քիչ թէ շատ լաւ զգեստը (ուսանող Շամոյեանի, վատման Ալեքսանեանցի, Սարգիս Մուրադեանի, Գ. Խաչատրեանցի և ուրիշների)։ Մեզ յայտնի չէ ձերբակալուածների և Քութայիս տարուածների որոշ թիւը. յամենայն դէպս, այդ թիւը հասնում է երկու հազարի։ Դրանցից, իրօք, ճակատից բերուած ռազմագերիները 3—4 տասնեակ մարդկանցից աւելի չէին, որոնց նկատմամբ մենք վկայ եղանք առանձնապէս վայրագ վերաբերմունքի։ Զինուորները գրկուեցին տաք հագուստից ու կօշիկից։ Սպաներից խլում էին լաւ կօշիկներն ու փոխարինում տրեխներով (շտ.–կապ. Տէր–Ղազարեան)։ Մի ռազմագերի զինուորի դաշոյնով վիրաւորեց պահակ զինուորը, և նա մեռաւ՝ առանց բժշկական օգնութեան։ Թիֆլիսում այդ ռազմագերիներից մի քանիսը մտրակով ծեծուեցին՝ Բորչալուի թաթարներից առնուած ձիաւոր պահակների կողմից*)։ Ներկայացուած փաստաթղթերը, յայտարարութիւնները, հարցաքննութիւն կատարելու մասին խնդիրները, պաշտօնատարների նկատմամբ գանգատները ո՛չ մի արդիւնք չունեցան։ Մենք չենք բերում մեր կրած վնասները...

Մեզնից ոմանք, ձերբակալուած դեկտ. 23–ին և աքսորուած Քութայիս, յետոյ զանազան պատճառներով վերադարձած, — Թիֆլիսի ճանապարհին ու հազիւ Թիֆլիս հասած նորէն ձերբակալուեցին և մինչև անգամ յետ ուղարկուեցին Քութայիս։ Եղան դէպքեր, երբ միևնոյն անձը ձերբակալուեց մինչև չորս անգամ»**)։

Այս ամենից հետո է տեսնել, թէ ի՞նչ լարուած յարաբերութիւններ էին ստեղծուած հայերի և վրացիների միջև — մի բան, որ, ի հարկէ, շատ դժուարացրեց երկու ժողովուրդների մերձեցման ու բարի հարևանական համակեցութեան գործը։ Պատերազմը մեծ չարիք պատճառեց երկու կողմերին էլ։ Ճիշտ է, նա մասամբ մաքրեց անառողջ մթնոլորտը Հայաստանում, բարձրացրեց հայ ժողովրդի կորովը, հայերին տուեց երկաթուղային ու զինուորական թանգարժէք նիւթեր, մասամբ թուլացրեց վրացիների յարձակողական ագրեսիվութիւնն ու հարկադրեց, որ, որոշ չափով,

---

*) «Աշխատաւոր», 30 յունուար, 1919թ.

**) Ցենք կարող այստեղ նշիշել, որ վրացի գերիները Հայաստանում բոլորովին այլ վերաբերումի էին արժանացել. նրանք պահւում էին առանձին զօրանոցներում, ստանում էին նոյնքան ուտելիք, որքան և զինուորները. սպաների համար տրւել էին յատուկ յարմարութիւններ. նրանք ստանում էին սպայական ռոնիկ։ Վրացական 4դդ և 5դդ գնդերի գերի ու վիրաւոր զինուորները «Բորբա»–ի խմբագրութեան ուղղած մի նամակով գրում էին, որ՝ իրենք «հայերի կողմից հանդիպել են ամենաջերմ ու սրտակից վերաբերումի։ Թէ քաղաքացիական և թէ զինուորական իշխանութիւնները գործ են դնում ամէն ջանք, որ դիւրացնեն մեր վիճակը։ Իսկ մեզ դերի առնող զինուորների վերաբերումը ամենաեղբայրականն է, որից լաւը կարելի չէ ցանկանալ»։